ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԴԱՆ ԱԹՈՅԱՆ
«Նորավանք» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՍՈՖՅԱ ՕՀԱՆՅԱՆ
ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի դոցենտ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու

ԱՐՓԻՆԵ ՄԱԼԲՋՅԱՆ
ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի ավագ լաբորանտ, ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի հայցորդ

ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ. «ՀԻՆԳԵՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ»

Համաշխարհային, տարածաշրջանային և պետական արդի քաղաքականության ինտելեկտուալ ապահովման գործընթացում աստիճանաբար մեծանում է հետազոտական հատուկ կառույցների, այսպես կոչված՝ ուղեղային կենտրոնների (Think Tanks) դերակատարությունը: Ընդհանուր առմամբ, տարբեր երկրներում ուղեղային կենտրոնների ի հայտ գալը և զարգացումը պայմանավորված են երկրի մտավոր ներուժի համախմբման, հասարակական, քաղաքական, տնտեսական հիմնախնդիրների լուծման և որոշումների կայացման գործընթացում դրա կիրառման անհրաժեշտության գիտակցմամբ և համապատասխան կառույցների կողմից հասարակական կարծիքի ձևավորման վրա ազդելու ձգտումով: Որպես հանգուցային կետեր ապահովելով ակադեմիական/փորձագիտական հանրությունների և պետական իշխանության համագործակցությունը՝ ուղեղային կենտրոններն իրականացնում են հետազոտական աշխատանք հասարակայնորեն նշանակալի հիմնախնդիրների (քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլն) լուծման ուղղությամբ, կատարում են կառավարական մարմինների ընդունած որոշումների և նախագծերի, նորմատիվային ակտերի ու ծրագրերի փորձաքննություն, մատուցում են խորհրդատվական ծառայություններ:

Հիմնաբառեր. *ուղեղային կենտրոններ, ինտելեկտուալ արտադրանք, փորձագիտական հանրություն, հետազոտական աշխատանք, փորձաքննություն, քաղաքական խորհրդատվություն*
JEL: I23, I39, J44, L30, O34

Հասարակության նորաստեղծական զարգացման հիմնախնդիրն այսօր ավելի արդիական է դարձնում սոցիալ-քաղաքական ոլորտում գաղափարներ, ինտելեկտուալ արտադրանք թողարկող և նորամուծություններ իրականացնող համապատասխան դերակատարների, կառույցների որոնումը: Նման հաստատություններն արդի սոցիալ-քաղաքական հարաբերություններում ստանձնում են միջնորդի գործառույթներ, քանի որ նորամուծությունը ենթադրում է երկու բաղադրիչի առկայություն՝ նոր գաղափարներ և դրանցով հետաքրքրված սուբյեկտներ, որոնք ընդունակ են կյանքի կոչելու և իրականություն դարձնելու այդ գաղափարները: Բացի այդ, հիմնախնդիրների լուծման նոր տարբերակների, նոր գաղափարների առաջքաշման կարևոր պայմաններից է տարբեր մոտեցումների, ավանդույթների համադրումը, այսինքն՝ տարբեր սոցիալական փորձ և ավանդույթներ ունեցող մարդկանց երկխոսության հնարավորությունը: Հենց այստեղ անհրաժեշտ է ուշադրությունը սևեռել այն կառույցներին, որոնք հայտնի են «ուղեղային կենտրոններ»[1] (Think Tanks) անվամբ, որտեղ միավորվում են հասարակության ու պետության զարգացմամբ մտահոգ, համապատասխան գիտելիքներ և փորձառություն ունեցող մարդիկ: Հենց նման կառույցների շրջանակներում է տեղի ունենում մի կողմից՝ ակադեմիական և փորձագիտական հանրությունների, իսկ մյուս կողմից՝ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությունը: Ուղեղային կենտրոնները գիտության և պրակտիկայի կապի մեխանիզմներ են, որոնց միջոցով կյանքի են կոչվում որոշակի գաղափարներ և առաջարկություններ հասարակական-քաղաքական ոլորտում տեղի ունեցող փոփոխությունների և զարգացումների համատեքստում[2]: Դրանք ինքնատիպ հանգուցային կետեր են հասարակության բարեփոխման ուղղությամբ տարվող սոցիալական գործընթացների կառուցվածքում, որտեղ ներգրավված են այս կամ այն ոլորտի լավագույն մասնագետները:

Ուղեղային կենտրոնների ուսումնասիրությամբ զբաղվող վերլուծաբանները, խոսելով այս կազմակերպությունների նպատակների մասին, առանձնացնում են հետևյալը.

- որոշումների ընդունման համար իբրև անհրաժեշտ տեղեկատվության այլընտրանքային աղբյուր հանդես գալը[3],
- նոր գաղափարների վերարտադրությունը և խնդիրների լուծման ոչ

---

[1] Գրականության մեջ «ուղեղային կենտրոն» հասկացությանը զուգահեռ գործածվում են նաև «մտքի ֆաբրիկա», «ուղեղային տրեստ», «վերլուծական կենտրոն», «հետազոտական կենտրոն», «իրավիճակային կենտրոն» և այլ հասկացություններ: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Балаян А., Сунгуров А.,** Фабрики мысли: международный и российский опыт, СПб., 2014, էջ 7-12:

[2] Տե՛ս **Վ. Աթոյան, Ս. Օհանյան, Ա. Մալքջյան, Շ. Մովսիսյան,** Հայաստանի հումանիտար բուհական կենտրոնները, «21-րդ դար» տեղեկատվական-վերլուծական հանդես, «Նորավանք» ԳԿՀ, 2015, 4 (62), էջ 78-93: **Վ. Աթոյան, Ս. Օհանյան, Ա. Մալքջյան, Շ. Մովսիսյան,** Հայաստանի բուհական վերլուծական կենտրոնները, Եր., «Ամբերդ» մատենաշար, 2015:

[3] Տե՛ս **Վ.Աթոյան,** «Ուղեղային կենտրոններ». անցյալ, ներկա և ապագա, «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», 2013, 1 (29), էջ 105:

ստանդարտ տարբերակների առաջադրումը,
- հիմնական խնդիրների և դրանց լուծման ուղիների հետազոտությունները,
- կառավարության պաշտոնյաներին ընթացիկ քաղաքական հիմնախնդիրների շուրջ խորհրդատվությունների ու երաշխավորությունների տրամադրումը,
- իշխանության մարմինների համար նորմատիվային փաստաթղթերի մշակումը,
- կառավարության ծրագրերի անկախ գնահատականը,
- գաղափարների փոխանակումը հեշտացնող գործառույթը (սեմինարների, գործարար քննարկումների ժամանակ և այլն),
- նախկին քաղաքական գործիչների/պետական պաշտոնյաների համար պահուստային աշխատավայրի ապահովումը,
- ՁԼՄ-ին քաղաքականության ու քաղաքական իրադարձությունների մասին տեղեկատվության ապահովումը:

Սովորաբար առանձնացնում են ուղեղային կենտրոնների հիմնական երեք գործառույթ՝ հետազոտական, կրթական և հաղորդակցային[4]:

Հետազոտական գործառույթի դեպքում թեմաները բազմազան են, վերաբերում են հասարակայնորեն նշանակալի հիմնախնդիրների (քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլն) լուծման որոնմանը: Այս գործառույթին են վերագրում նաև իշխանության մարմինների կողմից ընդունված որոշումների և նախագծերի, տարբեր նորմատիվային ակտերի ու ծրագրերի փորձաքննությունը, խորհրդատվական ծառայությունների մատուցումը:

Հետազոտության մեթոդների ընտրությունը պայմանավորվում է թեմայի, հիմնախնդրի առանձնահատկություններով. առավել հաճախ օգտագործվող մեթոդներից են սոցիոլոգիական հարցումները, համապատասխան փորձագետների հետ խորհրդատվությունը, համեմատական վերլուծությունը (բյուջեի, օրենսդրության, ինստիտուտների գործունեության): Արդյունքները ներկայացվում են հաշվետվություններում, որոնք հետագայում կարող են հանրայնացվել հոդվածների, գրքերի, համառոտ տեղեկագրերի միջոցով:

Կրթական գործառույթի դեպքում իրականացվում է ուսուցում միջոլորտային համագործակցության, նախագծային մշակույթի, հասարակական մասնակցության, ժողովրդավարական արժեքների և այլ թեմաներով: Ուսուցման ձևերից առավել հաճախ կիրառվում են կարճաժամկետ սեմինարները՝ ինտերակտիվ մեթոդաբանության կիրառմամբ (կենտրոնների փորձագետների, քաղաքական գործիչների, պաշտոնյաների, լրագրողների մասնակցությամբ):

Հաղորդակցային (միջնորդական) գործառույթի դեպքում ուղեղային կենտրոնը հանդես է գալիս որպես միջնորդ.
- կառավարության և ակադեմիական/փորձագիտական հանրության, քաղաքական ընտրախավի (էլիտայի) ու քաղաքացիական հասարակության կառույցների և բնակչության միջև (հանրային լսումներ, հասարակական փորձաքննության կազմակերպում, որոնք հասարակական մասնակցության, բնակչության խնդիրներն իշխանություններին հասցնելու առավել հեռանկարային ձևեր են),

[4] Տե՛ս **Горный М.,** Фабрики мысли и центры публичной политики в конце XX – начале XXI веков, http://www.civisbook.ru/files/File/Gornyi_fabriki.pdf

– ակադեմիական/փորձագիտական հանրության, գիտության և բիզնեսի միջև (հանդիպումների կազմակերպում, երկխոսության մշակույթի ձևավորում, առկա հիմնախնդիրների քննարկում և համատեղ մոտեցումների, ծրագրերի մշակում),
– ակադեմիական/փորձագիտական հանրության և ՁԼՄ-ների, գիտության և ՁԼՄ-ների միջև (գիտական հանրության հետ լրագրողների հանդիպումների կազմակերպում):



Գծապատկեր 1. *Ուղեղային կենտրոնների (ՈՒԿ) հաղորդակցային (միջնորդական) գործառույթը*

Ուղեղային կենտրոնների (ՈՒԿ) հաղորդակցային (միջնորդական) գործառույթի առանձնահատկությունները ներկայացված են գծապատկեր 1-ում:

Ուղեղային կենտրոնների ուսումնասիրության հաջորդ խնդիրը վերջիններիս դասակարգումն է, որը բարդ խնդիր է՝ ելնելով այս կազմակերպությունների ուղղությունների ու ռազմավարությունների բազմազանությունից: Գոյություն ունեն ուղեղային կենտրոնների դասակարգման բազմաթիվ եղանակներ[5]: Ըստ հետազոտվող թեմաների ընդգրկման՝ ուղեղային կենտրոնները լինում են համաշխարհային, ներպետական և նեղ մասնագիտացված, ըստ քաղաքական կողմնորոշման՝ քաղաքականապես գաղափարայնացված և քաղաքականապես անկախ: Հաշվի առնելով բազմաթիվ երկրներում դրանց նշանակալի ազդեցությունը հասարակական-քաղաքական, տնտեսական և այլ գործընթացների վրա՝ ուղեղային կենտրոնները համարում են

[5] Տե՛ս ***Солодовников С., Черныш С.,*** Мозговые центры Запада, http://nash-sovremennik.ru /archive/2008/n12/233-237_Solodovnikov_Chernysh.pdf, էջ 233-237:

«հինգերորդ իշխանություն»՝ օրենսդիր, գործադիր, դատական իշխանություններից և ԶԼՄ-ից հետո:

Մասնագիտական գրականության մեջ առավել տարածված է ուղեղային կենտրոնների դասակարգումն ըստ կազմակերպության նպատակների, արտադրանքի, ֆինանսավորման աղբյուրների. այս չափանիշների տեսանկյունից առանձնացվում է ուղեղային կենտրոնների չորս տեսակ.

- ակադեմիական (համալսարաններ առանց ուսանողների),
- պայմանագրով հետազոտություններ իրականացնող,
- գաղափարայնացված,
- կուսակցապատկան:

Ուղեղային կենտրոնների տիպաբանությունն ու հիմնական առանձնահատկությունները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Ուղեղային կենտրոնների տիպաբանությունը

Տեսակը / Հատկությունները	Համալսարաններ առանց ուսանողների (ակադեմիական ՈւԿ-ներ)	Պայմանագրային ՈւԿ-ներ	Գաղափարայնացված ՈւԿ-ներ	Կուսակցապատկան ՈւԿ-ներ
Աշխատակազմ	Ճանաչված անկախ գիտնականներ	Ճանաչված անկախ գիտնականներ	Գաղափարայնացված փորձագետներ	Կուսակցության անդամներ, կուսակցության հանդեպ չեզոք դիրքորոշմամբ մարդիկ
Ֆինանսներ	Հիմնադրամներ, կորպորացիաներ, մասնավոր անձինք	Կառավարական մարմիններ	Հիմնադրամներ, կորպորացիաներ, մասնավոր անձինք	Կուսակցություններ, կառավարության լրահատկացումներ
Օրակարգի հեղինակը	Հետազոտողներ, հիմնադրամներ	Կառավարական մարմիններ	ՈւԿ-ների ղեկավարներ	Կուսակցական ծրագրեր
Արտադրանքը	Ակադեմիական մենագրություններ, հոդվածներ ամսագրերում	Հաշվետվություններ կառավարական մարմինների համար	Համառոտ փաստաթղթեր, վերլուծականներ, տեղեկագրեր	Տարբեր
Առավել հայտնի ՈւԿ-ներ	Բրուկինգսի ինստիտուտ (ԱՄՆ)	«Ռենդ» կորպորացիա (ԱՄՆ), Դեմոկրատիայի իսրայելական ինստիտուտ (Իսրայել)	«Ժառանգություն» հիմնադրամ (ԱՄՆ), Հայեկի ինստիտուտ (Ավստրիա)	Ադենաուերի հիմնադրամ (Գերմանիա)

Այս դասակարգումն առավելապես նկարագրում է իրավիճակն ԱՄՆ-ում և արևմտյան քաղաքական մշակույթը կրող երկրներում: Սակայն աշխարհի բազմաթիվ այլ երկրներում (այդ թվում՝ Հայաստանում) իրավիճակը բոլորովին այլ է: Մյուս կողմից՝ նույնիսկ ԱՄՆ-ում ուղեղային կենտրոնների ճնշող մեծամասնությունն օժտված է միաժամանակ մի քանի տեսակների հատկանիշներով, թեև ավելի ստույգ կլինի ասել, որ այսօր վերանում են տարբերությունները, օրինակ՝ ակադեմիական և գաղափարայնացված ուղեղային կենտրոնների միջև. ակադեմիական ուղեղային կենտրոնները թողարկում են համառոտ վերլուծական տեղեկագրեր քաղաքական գործիչների համար, իսկ գաղափարայնացված ուղեղային կենտրոններն իրենց հետազոտական աշխատանքներում ներգրավում են ճանաչված գիտնականների: Բացի այդ, գոյություն ունեն բազմաթիվ նման կազմակերպություններ, որոնք բավական դժվար է տարբերել ուղեղային կենտրոններից: Աղյուսակ 2-ում բերված են ուղեղային կենտրոնների յուրաքանչյուր տեսակին նման կազմակերպություններ:

Աղյուսակ 2

Ուղեղային կենտրոնները և դրանց մոտ կազմակերպությունները

ՈւԿ-ի տեսակը	Համանման կազմակերպություններ
Ակադեմիական	Համալսարանական հետազոտական կենտրոններ
	Կառավարական հետազոտական կենտրոններ
Պայմանագրային	Առևտրային խորհրդատվական ֆիրմաներ
	Կառավարական ժամանակավոր հետազոտական հանձնաժողովներ
Գաղափարայնացված	Շահագրգիռ խմբեր
	Հասարակական շահերը պաշտպանող ՀԿ-ներ
Կուսակցապատկան	Քաղաքական կուսակցությունների հետազոտական բաժիններ

3-րդ աղյուսակում բերված են ուղեղային կենտրոնների գործունեության կառավարման առանցքային հատկությունները:

Աղյուսակ 3

Ուղեղային կենտրոնների կառավարման առանցքային հատկությունները

Հատկություններ	Առավելություններ	Թերություններ
Ֆինանսական աղբյուրներ		
Կազմակերպությունների նվիրատվություններ	Որոշ երկրներում դա կարող է դառնալ ֆինանսավորման հիմնական ու կայուն աղբյուրներից մեկը:	– ՈւԿ-ն ստիպված կարող է փոխել իր առաջնահերթություններն արտաքին դոնորների պատճառով: – ՈւԿ-ն կարող է ընկալվել որպես արտերկրյա շահերի արտահայտման գործիք:
Պայմանագրեր կառավարության հետ	Որոշ երկրներում դա կարող է դառնալ ֆինանսավորման հիմնական ու կայուն աղբյուրներից մեկը:	ՈւԿ-ն, որպես անկախ կազմակերպություն, իրականացնում է հիմնականում պետության պատվերները:
Պայմանագրեր կորպորացիաների հետ	Որոշ երկրներում դա կարող է դառնալ ֆինանսավորման աղբյուրներից մեկը:	– Կարող է ազդել ՈւԿ-ի՝ որպես օբյեկտիվ քաղաքական խորհրդականի հեղինակության վրա: – Քիչ հավանական է զարգացող ու անցումային երկրների մեծամասնությունում:
Համալսարանական հետազոտական կենտրոններ	– Համալսարանը վճարում է աշխատավարձ, ապահովում իր տեխնիկայի հասանելիությունը: – Համալսարանն ապահովում է իր փորձագետների համագործակցությունը: – Լրացուցիչ վստահություն արդյունքների հանդեպ:	– Համալսարանի մյուս առաքելությունը (կրթություն) կարող է դառնալ քաղաքական հետազոտությունների հանդեպ ուշադրության նվազման պատճառ: – Օբյեկտիվության ակադեմիական նորմը կարող է հակասել քաղաքական հետազոտության կարիքներին: – Կադրերի, ռեսուրսների և այլ հարցերի հանդեպ վերահսկողության հնարավոր նվազում:
Հետազոտական ուղղվածություն		
Հետազոտություններ նեղ մասնագիտական ոլորտում	Երբեմն օգնում է զարգացնել ինստիտուցիոնալ բրենդը և շուկայական հարթակը քաղաքական գործիչների, ՁԼՄ-ի, հիմնադրամների շրջանում:	Երբեմն կարող է հանգեցնել քաղաքական գործիչների, ՁԼՄ-ի, հիմնադրամների կողմից հետաքրքրության կորստի, եթե ՈւԿ-ի գործունեության ոլորտը նրանց ուշադրության կենտրոնում չլինի:
Քաղաքականության միջազգային, տարածաշրջանային, տեղական հարցեր	Մեծանում է ՈւԿ-ի ազդեցությունը, եթե տվյալ մակարդակում չկան իշխանության համար փորձաքննության այլ աղբյուրներ:	Հետազոտողները կարող են շահագրգռված չլինել աշխատելու քաղաքականության տվյալ մակարդակում: Հիմնադրամները կարող են շահագրգռված չլինել ֆինանսավորելու հետազոտությունները տվյալ ոլորտում:

Աշխատակազմ և աշխատակիցներ		
Մշտական աշխատակազմ	– Լրիվ վերահսկողություն աշխատակիցների աշխատաժամանակի հանդեպ: – Ավելի հարմար է իրականացնել երկարաժամկետ նախագծեր ու ծրագրեր: – Կարելի է արագ արձագանքել ծագող կարճաժամկետ քաղաքական հիմնախնդիրներին: – Աշխատակիցների մեջ կարող է ձևավորվել սիներգետիկ ինտելեկտուալ էֆեկտ: – Մեծանում է ՈւԿ-ների բրենդի նշանակությունը քաղաքական գործիչների և ՁԼՄ-ի համար:	– Աճում են մշտական ծախսերը: – Երկարաժամկետ հեռանկարում կարող է նվազել փորձաքննության որակի մակարդակը:
Որոշակի նախագծի (պայմանագրի) աշխատակազմ	– Նվազում են մշտական ծախսերը: – Մեծանում է քաղաքական օրակարգի փոփոխության արձագանքելու հնարավորությունը:	– Աշխատակազմը կարող է մեծ ուշադրություն դարձնել այլ աշխատանքի առաջնահերթություններին (օրինակ՝ համալսարանում): – Նվազում են կազմակերպության բրենդն առաջ մղելու և քաղաքական գործիչների ու ՁԼՄ-ի հետ փոխգործակցության ջանքերը:
Գիտական աստիճան ունեցող ճանաչված մասնագետներից կազմված աշխատակազմ	Մեծանում է վստահությունը ՈւԿ-ների արտադրանքի նկատմամբ:	Հեղինակավոր գիտնականները երբեմն անտեսում են իրենց հետազոտությունների համառոտության և մատչելիության ապահովումը:
Արտադրանք և արդյունքներ		
Գրքեր և հոդվածներ գիտական հանրության համար	Ակադեմիական հետազոտությունները կարող են մեծացնել ՁԼՄ-ների և քաղաքական հանրության վստահությունը:	Ակադեմիական հետազոտությունների արդյունքները, որպես կանոն, լինում են չափազանց ծավալուն և քաղաքական գործիչների ու ՁԼՄ-ների համար դժվար ընկալելի:
Համառոտ վերլուծական տեղեկագրեր	Այդպիսի տեղեկագրերը կարող են կարդալ զբաղված հայտնի քաղաքական գործիչներն ու լրագրողները, ովքեր ժամանակ չունեն կարդալու ակադեմիական հետազոտությունների ծավալուն հոդվածներ:	Այդ տեղեկագրերում համառոտության պատճառով կարող են դուրս մնալ որոշ կարևոր վերլուծություններ:
Սեմինարներ ՁԼՄ-ների ու քաղաքական գործիչների համար	– Համեմատաբար էժան միջոցառումներ են: – Կարող են հանգեցնել քաղաքական գործիչների ու ՁԼՄ-ի հետ ՈւԿ-ի սերտ համագործակցության:	Դրանք կարող են պարբերական բնույթ չկրել:
Իրենց արդյունքների հանրայնացման նպատակով համացանցի օգտագործում	– Մատչելի է: – Հեշտ է թարմացնելն ու փոփոխություններ կատարելը:	Նվազում է հետազոտության արդյունքները վաճառելու հնարավորությունը:

Համաձայն Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ երկրների գործունեության ուրվագծի [6] արդյունքների՝ համագործակցությունն ուղեղային կենտրոնների հանրության անդամների միջև թույլ է, սահմանափակ կամ գրեթե բացակայում է տեղեկատվությունն այլ ուղեղային կենտրոնների հետազոտությունների թեմաների վերաբերյալ, դրանց միջև բացակայում է աշխատանքի բաժանումը:

Ուղեղային կենտրոնների միջև համագործակցությունը հնարավոր է հետևյալ ձևերով (աղյուսակ 4).

ա. ցանցեր,

բ. միություններ, կոալիցիաներ,

գ. գործընկերություններ, կոնսորցիումներ:

Աղյուսակ 4

Ուղեղային կենտրոնների համագործակցությունը

Համագործակցության տեսակը / Չափանիշները	*Ցանցեր*	*Միություններ, կոալիցիաներ*	*Գործընկերություններ, կոնսորցիումներ*
Աստիճանակարգություն	Համագործակցության ամենաճկուն ձևն է, աստիճանակարգությունը բացակայում է	Համագործակցության ավելի խիստ ձև է, կա որոշակի աստիճանակարգություն	Գործում է աստիճանակարգություն՝ իրավասությունների, պարտականությունների և պատասխանատվության հստակ բաշխմամբ
Նպատակների ձևակերպում	Ընդհանուր է և ոչ որոշակի	Հստակ է	Խիստ որոշակի է
Մասնակիցների միջև կապ	Ճկուն է	Յուրաքանչյուր մասնակցի դերը որոշված է ընթացակարգով	Մասնակիցների միջև աշխատանքն ու պատասխանատվությունը հստակ բաշխված են
Կառավարում	Չկա ղեկավար մարմին	Ղեկավարը համագործակցության նախաձեռնողն է	Կան ղեկավար մարմիններ և նախագծի իրագործման համար պատասխանատու անձնական ղեկավար

Ա. Ցանցեր: Ցանցերը քաղաքացիական հասարակության կառույցների համագործակցության ճկուն ձևեր են՝ առանց աստիճանակարգային պատնեշների (լայն տարածում են ստացել XX դարի վերջին և XXI դարի սկզբին): Նվազագույն իրավական սահմանափակումները մեծացնում են հասարակության և համաշխարհային տնտեսության մեջ ցանցերի հնարավորությունները: Այս դեպքում կառավարման կարևոր խնդիրներից է կենտրոնի գլխավոր դերից անցումը ծայրամասային դերակատարների հավասար դերին: Ցանցերն ավելի ուժեղ են դարձնում յուրաքանչյուր մասնակից կազմակերպությանը: Ցանցերի առանձնահատկություններն են.

- նպատակները ձևակերպված են շատ ընդհանուր և ոչ որոշակի,
- տեղի է ունենում տեղեկատվության փոխանակում որպես գործունեության հիմնական տեսակ,
- գոյություն ունի ճկուն կապ մասնակիցներից յուրաքանչյուրի միջև,

[6] Տե՛ս **Ostaf S.,** Managing and coordinating networks. Presentation at the seminar "Strengthening think tanks in Eastern and Central Europe: Exchanging good practice", 11-14 November, Vilnius, 2004:

- կառավարումը թույլ է, բացակայում է ղեկավար մարմինը,
- ընդհանուր որոշումները պարտադիր չեն ցանցի անդամների համար,
- ռեսուրսների բաժանումից մասնակիցները հստակ շահույթ չունեն,
- մասնակիցների հանդիպումները կազմակերպվում են ըստ անհրաժեշտության:

Բ. Միություններ, կոալիցիաներ: Այս միավորումները ստեղծվում են որոշակի հիմնախնդիրների լուծման համար: Դրանց հիմնական առանձնահատկություններն են.

- առկա են հստակ նպատակներ,
- ունեն ղեկավար. մասնակից կազմակերպություններից մեկը, որպես կանոն, կոալիցիայի ստեղծման նախաձեռնողն է,
- որոշումների ընդունման գործընթացը որոշակի է (կա ղեկավար մարմին, մշակված է ընթացակարգ),
- մշակված է նպատակներին հասնելու ընդհանուր ռազմավարություն:

Գ. Գործընկերություններ, կոնսորցիումներ: Այս միավորումները ստեղծվում են որոշակի նախագծերի իրագործման նպատակով, ինչը ենթադրում է մասնակիցների նախագծային մշակույթի առկայություն. դա, իր հերթին, նախանշում է հարաբերությունների աստիճանակարգային համակարգի ներմուծում իրավասությունների, պարտականությունների և պատասխանատվության բաշխմամբ: Գործընկերությունների առանձնահատկություններն են.

- համագործակցությունը տեղի է ունենում նախագծերով որոշված նպատակների հիման վրա,
- մասնակիցների միջև գործում են պայմանագրային փոխհարաբերություններ,
- մասնակիցների միջև աշխատանքն ու պատասխանատվությունը հստակ բաժանված են իշխանության ու ենթարկման հարաբերությունների հիման վրա,
- կառավարումը կատարվում է համակարգմամբ (կան ղեկավար մարմիններ և, ամենակարևորը, նախագծի իրագործման համար պատասխանատու ղեկավար),
- ղեկավար մարմինները հաշվետու են գործընկերության մասնակիցների առջև,
- գործընկերության գործողության ժամկետը որոշվում է ըստ նախագծի ժամկետի:

Այսպիսով՝ ուղեղային կենտրոնները յուրահատուկ կամուրջ են ակադեմիական հանրության և որոշումներ կայացնողների միջև, որոնք, նշանակալի ազդեցության շնորհիվ, լիովին կարելի է համարել «հինգերորդ իշխանություն»: Նման կառույցները միջնորդ են փորձագիտական հանրության, կառավարության, քաղաքական ընտրախավի, բիզնեսի, քաղաքացիական հասարակության կառույցների ու բնակչության միջև: Դրանք հանրային քաղաքականության գործընթացում հանդես են գալիս որպես մտավոր արտադրանք թողարկող և որոշումների ընդունման համար անհրաժեշտ տեղեկատվության այլընտրանքային աղբյուրներ, որոնք կարևորագույն հիմնախնդիրների լուծման գործում շահագրգիռ կողմերին ապահովում են նոր գաղափարներով՝ իրականացնելով հիմնարար հետազոտություններ, տրամադրելով խորհրդատվական ծառայություններ:

ВАРДАН АТОЯН
Заместитель исполнительного директора Фонда “Нораванк”, кандидат экономических наук, доцент

СОФЬЯ ОГАНЯН
Доцент кафедры “Философии и истории армянского народа” АГЭУ, кандидат философских наук

АРПИНЕ МАЛКДЖЯН
Старший лаборант кафедры “Философии и истории армянского народа” АГЭУ, соискатель кафедры “Социальной философии и этики” ЕГУ

Мозговые центры в политическом процессе: “пятая власть”.– В современных политических процессах и в интеллектуальном обеспечении глобальной, региональной и государственной политики постепенно возрастает роль особых исследовательских структур – так называемых мозговых центров (Think Tanks). В целом, в разных странах возникновение и развитие мозговых центров обусловлено стремлением объединить интеллектуальный потенциал страны в решении социальных, политических, экономических проблем, а также сознанием необходимости использования этого потенциала в процессе принятия решений и стремлением воздействовать на формирование общественного мнения со стороны соответствующих структур.

В качестве узловых точек, обеспечивая сотрудничество академических/экспертных общностей и государственной власти, мозговые центры занимаются исследовательской деятельностью, проводят экспертизу решений и проектов, нормативных актов и программ, принятых правительством или другими структурами, предлагают консультации и т.д.

Ключевые слова: *мозговые центры, интеллектуальная продукция, экспертное сообщество, исследовательская работа, экспертиза, политическая консультация.*
JEL: I23, I39, J44, L30, O34

VARDAN ATOYAN
Deputy Executive Director at “Noravank” Foundation, PhD in Economics, Associate Professor

SOFYA OHANYAN
Associate Professor at the Chair of “Philosophy and Armenian History” at ASUE, PhD in Philosophical Sciences

ARPINE MALKJYAN
Senior Assistant at the Chair of “Philosophy and Armenian History” at ASUE, Researcher at the Chair of “Social Philosophy and Ethics” at YSU

Think Tanks in Political Processes: “The Fifth Power”.– In the current political processes and in intellectual provision of global, regional and state politics the role of special research bodies – so-called “think tanks”, is gradually increasing. In

general, establishment and development of think tanks in different countries is conditioned by joining intellectual potential of the country in solving social, economic and political issues also acknowledging the importance of using this potential in the process of decision making and aspiration of influencing the formation of the public opinion from the point of view of relevant structures.

As hotspots providing cooperation among academic/expert societies and the government, think tanks deal with research, carry out expertise of decisions and projects, normative acts and programs that are adopted by the government or other bodies, perform advisory roles, etc.

Key words: *think tanks, intellectual products, community of experts, research, expertise, political consultation.*
JEL: I23, I39, J44, L30, O34